

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԿԱՐԻԱ

Տարեկան . . 12 Ժր.
Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Իրիւն թիւ մէկ ծրարով
Տարեկան . . 14 Ժր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 ծրար
Վեցամսեայ 1.50 "
ԿԱՆԻՍԻԿ




ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՌԿՈՒԹ ԸՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

Ծրարացման տողը
20 սանդիւն



ՀԱՍՏԵ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Դրոշմը կը
չեն տրուիր

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ
ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՉ

Միջազգային Մամուլը

Դրոշակ իրաւամբ կը դատարկեմ
միջազգային մամուլի ներկայացու-
ցիչները, որոնք իրենց Հ. Համաժո-
ղովը գումարեցին Յուլիոսի վերջերը
ազատ Չուրիցերիոյ մայրաքաղաքին
մէջ: Այսպէս քաղաքակրթ շա-
խարհի պարբերական մամուլին այդ
ներկայացուցիչները՝ որոնց կո-
չումն ու նուիրական պարտակա-
նութիւնն է՝ առանց դասակարգի
խտրութեան՝ մարդկութիւնը տա-
նապնդող չարիքներուն դէմ մա-
քաւիլ, ընկճում, ճնշում ժո-
ղովուրդներու պաշտպան հանդի-
սանալ և տիրող ուժերը՝ պետու-
թիւնները՝ բարոյապէս պարտա-
ճանաչութեան մղել, առ այս ա-
նոնց ռահմիրայ ըլլալ, այս անգամ
եւս գերազանցօրէն ապիկար դուրս
կուգան վերջին իրենց համախըմ-
բումի ծրագրովը, ուրկէ մամուլի
պարտականութեան էն նուիրական
մասը դուրս ձգուած է, այն է
«քաղաքական խնդիրներով չը զբա-
ղիլ»:

Եւրոպայի Հայ Ուսանողական
Միութիւնը կոչ մը ներկայացու-
ցած էր այդ Համաժողովին: Այդ
կոչով Հայ մամուլի դարաւոր պատ-
մութիւնը անցողակի ընելէ և ա-
նոր արդի տրուել վիճակը՝ որ Հայ-
րենիքը տառապնդող քաղաքական
այժմու կացութեան հետեւանքն
է, ներկայացնելէ յետոյ, ցաւ կը
յայտնէր համաշխարհային մամուլի
մէկ կարեւոր մասին դատապար-
տելի լուծեան համար ու կոչում
կընէր միջազգային մամուլի ներ-
կայացուցիչներուն որ յանուն մար-
դասիրութեան սկսին զօրաւոր բո-
ւականտ մը ի նպաստ Հայկական
Դատին:

Այդ կոչէն հարկւրաւոր օրի-
նակներ Համաժողովի անդամնե-
րուն և թերթերու ցրուելէ զատ,
մասնաւորապէս Հայ պատուիրակ
մը ներկայացած էր Համաժողովին:
Որուն վարիչ Յաննաթողովոյ նա-
խագահը Հայ պատուիրակին պա-
տասխանած է թէ՛ ինք թէ՛ եւ

Չեմօրէն համակիր է հայկական
դատին. բայց պաշտօնապէս չէ
կարող այդ քաղաքական հարցը
Համաժողովի օրակարգին անցնել:

Սակայն ուրախութիւն է որ անկախ
անդամներ գոնէ անպաշտօն կեր-
պով իրենց համակրութիւնը յայտ-
նեցին. իսկ Տիկին Սէվերին նա-
խաձեռնութիւնը ունեցաւ ժողո-
վասահին մէջ թուղթ մը ստո-
րագրել տալու 200ի չափ ամէն
ազգէ գործներու, հետեւեալ բանա-
ձեւով:

«Բոլոր երկիրներու հրապարա-
կախօսներս շնորհապէս կը փափա-
քինք որ Պետիին դաշնագրին 61րդ
յօդուածը Հայաստանի մէջ գոր-
ծադրուելով, Հայ ժողովուրդին
կեանքի ու ստացումքի ապահո-
վութիւն տրուի»:

Նշանաւոր հրապարակագիրներ
ստորագրելով այս բանաձեւը յանձն
առին իրենց թերթերուն միջոցաւ
պաշտպանել բուն և յարստեւո-
րէն հայկական բարենորոգումներու
խնդիրը: Ոմանք ալ դրամական
նուէրներ յանձնեցին Տիկին Սէ-
վերինի ի նպաստ հայասեր բոքա-
կանտին:

Բացառաբար այս բանաձեւը չը
ստորագրողներու մեծագոյն մասը
գերմանացիներ էին:

Խաղաղութեան Համաժողովի
մնայուն յանձնախումբը Հայոց
ի նպաստ:

Միջազգային խաղաղութեան
ԺԱՐԳ Համաժողովէն ընտրուած
Պէտիին Մնայուն Յանձնախումբը
հետեւեալ յիշատակագիրը ղրկած
է 1895 Մայիս 11ին Հայաստանի
բարենորոգմանց ծրագիրը ստո-
րագրող երեք մեծ պետութեանց—
Անգլիոյ, Ֆրանսայի և Ռուսիոյ—
արտաքին գործոց նախարարնե-
րուն:

Վսեմ Տէր

1901 Հոկտեմբեր 3 ին մեր պիւտոն
գործադրելով խաղաղութեան Ժ. րդ Մի-
ջազգային Համաժողովին մէկ որոշու-
մը, կուգար ձեր կառավարութեան
ուշադրութիւնը հրաւիրել հայ ժողո-
վուրդի թշուառ վիճակին վրայ: Ձեզ
խոնարհաբար առաջարկած էինք գու-

մարել պաշտօնապէս դիպաւնախոր-
հուրդ մը եւ լուծել այդ խնդիրը գոր-
ծադրելով բարենորոգմանց այն ծրա-
գիրը, որ պատրաստուած էր 1895 ի
Մայիսին անգլիական, ֆրանսական
եւ ռուսական կառավարութիւններու
միջոցաւ եւ հաստատուած էր Սուլթա-
նէն:

Այդ առնչէն ի վեր կացութիւնը եր-
բէք չէ փոխուած եւ նորանոր կոտո-
րածներու երկիւղ կը տիրէ մանաւանդ
Սասունի կողմերը:

Իրաց այս հանգամանաց տակ թա-
խանձագիրն կը խնդրենք Ձեր Վսեմու-
թեան յիշօրէն ուշադրութեան առնել
1901 Հոկտեմբեր 3 ի մեր յիշատակա-
գիրը, զոր խաղաղութեան ԺԱ. րդ
համաշխարհային համաժողովը յանձնա-
րարած է մեզ վերջիցեցնել ձեր կառա-
վարութեան, խնդրելով Ձեզմէ եւս
որ, իբրեւ առեւտրային կարգադրութիւն
համաձայնութիւն մը գոյացնէք Պէտի-
նի դաշնագիրը ստորագրող միւս կառա-
վարութիւններու հետ, որպէս զի Մեծն
Բրիտանիոյ, Ֆրանսայի եւ Ռուսիոյ
հիւպատոսները ղրկուին Սասունի
էն մօտ գտնուող Մուշ քաղաքը, քա-
նի որ եւրոպական պաշտօնական վի-
ներու ներկայութիւնը միայն կարող
է արգելել կրկնութիւնը այն արհա-
հեղ դէպքերուն որոնք ընդհանուր
սրտմտութիւն առաջ բերին:

Ընդունեցէք մեր խորին եւ այլն
նախադահ Պատուոյ քարտուղար
Ֆ. Պախր Էյի Տրգումուն

Բայց մենք լաւ կը յիշենք թէ
1896ին Պէտիոյ մէջ նոյնիսկ բո-
լոր դիպաւններուն ներկայութեանը
հազարաւոր անմեղներ ջարդուե-
ցան անարգել: Այսօր ալ Դավիթ-
ժէն ստացուած հեռագիրը ցոյց
կուտայ թէ Մուշի մէջ նոր հիւ-
պատոսներու ներկայութիւնը թուրք
կառավարութեան շատ մտահոգու-
թիւն չը պատճառել իր հայաջինջ
ծրագրին գործադրութիւնը առաջ
տանելու մօտին: Անոր սա վեր-
ջին յանդգնութիւնը իցիւ թէ ծա-
ռայէր իր դէմ կարգացուելիք դա-
տավճույն իբր լրացուցիչ փաստ,
ինչպէս Պաթագի ջարդը ծառա-
յեց Պուլկարիոյ ազատութեան:

ՅԱՆՅԱՆՔԸ ՈՐՈՒՆ Է

Ա.

Խաղաղոյի անցեալը

Յեղափոխութիւն սուրբ է, յե-
ղափոխութեան զինուորներ, մա-
քուր, անկեղծ և անձնուէր պէտք
է ըլլան: Գերի և ստրուկ ազգե-
րու բարօրութեան միակ միջոց միշտ
յեղափոխութիւնը եղած է և պիտի
ըլլայ:

Խիստ ցաւալի է ըսել թէ վերջի
տարիներս մեր յեղափոխական
գործը հետզհետէ այնպիսի կեր-
պարանք մը ստացաւ որ այսօր ժո-
ղովուրդի մէկ մասը բոլորովին
տարբեր կերպով կը վարուի դէպի
այդ սուրբ գործը և այդ գործի
զինուորները. այսինքն 1890—96
թուականներու բաղդատմամբ բո-
լորովին հակապատկերը կը գըտ-
նենք:

Այդ քննադատութիւնը ընել և
պատճառներ քննել երկար ուսում-
նասիրութեան պէտք ունին, հե-
տեւաբար զանց կընենք. բայց
միեւնոյն ժամանակ մենք ազատ ենք
մեր անհատական համոզումները և
կարծիքները յայտնելու:

Իրենց ազատութիւն և անկա-
խութիւն ձեռք բերող ազգաց
պատմութիւններ երբ կարգանք
պիտի տեսնենք որ իրենց յեղափո-
խական ասպարէզի մէջ գտնուած
են բաղդախնդիրներ, եսամոլներ,
չահախնդիրներ, խաչագողներ,
դաւաճաններ և մատնիչներ. բայց
միեւնոյն ժամանակ պիտի տեսնենք
որ այդպիսիներ իրենց արժանա-
ւոր պատիժներ կրած են:

Դժբաղդաբար մեր մէջ ալ գըտ-
նուեցան այնպիսի վատ և ստոր ա-
րարածներ, որոնք արդէն վաղուց
առիթի մը կը սպասէին իրենց շա-
հատակութիւնները ի գործ դնելու,
ժամանակը հասած նկատելով՝ դէմ-
քերնուն դիմակ անցուցած, ազգա-
սիրական և հայրենասիրական սկզբ-
բունքներու ու գաղափարներու
մարմնացումի ճիգով թուլութեամբ,
անկեղծի և անշահախնդրի յատ-
կութեամբ, անձնուէրի և անձնա-
զոհի պատրաստականութեամբ իբր

իրենց ստորակ և տառապեալ եղ-
բայրներու ցաւերուն և վիշտերուն
ցաւակից, յանուն իրենց ազգի և
հայրենիքի ազատութեան չար-
չարուելու, բանտարկուելու և մեռ-
նելու պատրաստ՝ անկեղծ և մա-
քուր զինուորի մը պէս եկան և
ինքզինքնին յեղափոխական առ-
պարէզին մէջ նետեցին, ճիշդ գառ-
նազգեստ գայլերու նման: Չմոռ-
նանք ըսելու նաեւ, որ անպիտան
ինքզինքնին բարձր խեղճութիւն մը
տէր (.) կը ցուցնէին:

Վերջէն տեսնուեցաւ որ այդպի-
սինքն գոնէ անուս և պարզ զի-
նուորի մը չափ անկեղծ և մաքուր
ըլլալու ազնուութիւն չունեցան և
անուս ու պարզ զինուորը իրաւունք
ունեցաւ իրեն թող տալու այդ-
պիսիներուն ըսելու «թքել եմ
խելքիդ, ուսմանդ և գրչիդ ալ
վրայ»:

Թանցանք որո՞ւն է. — Ժողո-
վուրդին թէ դիմակաւորներուն:

Դիմակաւորները չեն յանցաւոր
չեն. բանի որ անխղճութեամբ իրենց
արհեստ ընտրած են կեղծիւ, կո-
ղպտիւ, ժողովուրդի արիւն քրտին-
քով ժողուած սանթրիոններ կործա-
կելու և այդ գումարը իրենց շուք և
և հանգիստ ապրուստին յատկացնե-
լու. այո՛, մեծ յանցանքը ժողովուր-
դինն է որ այդպիսիներու սխրա-
գործութիւնները տեսնելով և գիտ-
նալով հանգիստ կը պաշտպանէ և
այդպիսիներու ազատութիւնը վա-
րագործելով մը ծածկելու համար ա-
մեն ճիշդ կը թափէ և ամենէն
ստոր միջոցներ չը խնայեր, պարզ
գործիք մը և դասալիք մը ըլլա-
լով. մենք այդպիսիներուն ամե-
նայն համարձակութեամբ կըսենք.
«նման զնման սիրէ»:

Մենք այնպէս համոզուած ենք
թէ որչափ որ կեղծ յեղափոխա-

կաններ անպիտան մնան և ասպա-
րէզէն չարատաքսուին, այնչափ ալ
այդ կեղծարարներու թիւը պիտի
բազմանայ: Աղապիսիներու գի-
մակներ պատուելու է, հրաշէկ հր-
կաթով իրենց ճակտին վրայ,
ԱՆԽԻՂՃ, ԱՆԱՄՕԹ և ՎԱՏ
մակերարները դրոշմելու և օր առ օր
ասպարէզէն արտաքսելու է:

Քանի որ յեղափոխութիւն սուրբ
է, և պէտք է միշտ սուրբ մնայ,
կեղծ սրտեր, պիղծ լեզուներ և
ազոտած ձեռքեր պէտք չէ որ գոյու-
թիւն ունենան այս սորոքութեան
ասպարէզին վրայ:

Ինչպէս ըսինք ամեն որ ազոտ է
իր անհատական համոզումն և կար-
ծիքն ունենալ, հետեւաբար մենք
ալ այս տխուր և ցաւալի դէպքե-
րու մասին մեր անհատական հա-
մոզում և կարծիքն ունենալու ա-
զատ ենք:

Ի հարկ է մենք պիտի պարտա-
ւորուինք որոշ նպատակաւ մը մեր
այս հրատարակութեան մէջ մտնի
և անորոշ կէտեր թողուլ, որոնք
կրնան յեղափոխական գաղափար-
ներ, չը հրատարակելիք նախկին
և մեզի վերապահուած կէտեր ըլ-
լալ. անշուշտ պիտի պարզենք ա-
նոնք ալ այն ատեն միայն երբ
հարկ տեսնուի:

Արդէն, ինչպէս պիտի տեսնուի
մեր գրածներէն, խաչագողութիւն
այնպիսի ճարպիկ և հետակորոյս
ձեւով մը կատարուած է, գործին
այնպիսի կերպարանք մը տրուած
է, և խնդիրը այն աստիճան խճող-
ուած է, չըսենք թէ ճիշդ Տրէյ-
ֆուսի խնդրին կը նմանի, ալ
գրեթէ կը համապատասխանէ:

Յ. Կ. ՃԱՆԿԻՆԵԱՆ

(Շարունակելի)

ԿԱՎԿԱՍԻ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Կովնասի կըթասէրներուն աշխարհիկ (լաիք) կուսակցութիւնը, որ Կղե-
րին ազդեցութեան հակառակ է, յա-
ջողութիւն մը ունեցաւ այս օրերս՝
Ս. Հայրապետին մէկ տնօրինութեան
դէմ: Ն. Ս. Օծուլիւն, հանդէպ կա-
ռավարութեան ըստ կարի ապահովելու
համար Թեմական Դպրանոցներուն գո-
յութիւնը, հրամայած էր որ սկզբնա-
բար եկեղեցական հասցնելու պաշտօնն
ունեցող այս վարժարաններուն Տե-
սուչներն ընտրուին նորահաս գիտնա-
կան վարդապետներուն մէջէն: Վերո-
յիշեալ կուսակցութիւնն առաջին օրէն
հակառակեցաւ այս որոշման: Այնպէս
ըրաւ որ՝ նախ եւ առաջ՝ Տիգրիսի նե-
սէսեան Դպրանոցին համար հոգեւորա-
կան Տեսչի անուանումը «տարեկան
արձակուրդէն ետք» ձգեց: Ս. Հայ-
րապետին որոշած տնօրինութեան ի-
մաստը պէտք էր որ միայն պէս չպաշտպան-
ուեցաւ: Մամուլին մէջ, Ոչ իսկ Մայր
Լիթոնոյ կրօնաթերթին այս մասին որոշ
բան մը գրեց, եւ սպասուած ապացու-
ցական խօսքերը չըսան: Ասդիէն ան-
դիէն ազդեցութիւն րաւեցողներն Ն. Ս.
Օծուլեան վրայ, որ արդէն ամէն հո-
վէ կը շարժի, եւ ո՛չ մէկ որոշման
վրայ հաստատ կը կենայ, եւ ելքն
այն եղաւ որ «առ առժամ յետաձգուե-
ցաւ» Հոգեւոր Դպրանոցներուն համար
եկեղեցական Տեսուչներ կարգելու որո-
շումը, այսինքն՝ «յուսկան կազան-
դին» մնաց: Մեզ գրուածին նայելով,
Կովկասի Պետական Կրթական Վերա-
տեսչութեան ուղածն ալ այս է ապա-
քէն: Ղի Կառավարութիւնը կը միտի
այն Դպրանոցները վիճակակից ընել
ծխական բարեխիշտակ դպրոցներուն,
առարկելով թէ անոնք ճշդիւ հոգեւո-
րական Սեմինարիաներ չեն, եւ իբրեւ
աշխարհական հաստատութիւններ,
պէտք է նախարարին նոյն (ուսու) վերա-
տեսչութեան որ արգէն կը վարէ միւս
աշխարհական հաստատութիւնները: Մայր
Լիթոնոյ հակառակ գտնուող կուսակ-
ցութիւնն (.) այս առաջին անգամը չէ որ

(.) Մշակականները կանխարկէ:

Դ. Խ.

եկեղեցական կամ աշխարհական իրա-
ւունք մը Մայր Լիթոնոյ չըջանալէն
դուրս հանելու և Ռուս պաշտօնէն
թեան բարեհաճութեան յանձնելու միջ-
նորդ կըլլայ: Դժուար է հակեցնել այս
«աշխարհիկ» կուսակցութեան թէ
մնացեալ քիչ մը եկեղեցական արտօ-
նութիւններն ու իրաւունքներն ալ մի
միայն եկեղեցւոյ հովանիին ներքեւ
կրնան պատասպարուիլ եւ պաշտպան-
ուիլ, եթէ երբէք պիտի կրնան պա-
սպարուիլ եւ պաշտպանուիլ՝ անոնց
դէմ մէթոտաւոր կերպիւ ուղղուած
լուծիչ, խրամատիչ գործողութեան
հանդէպ:

(Բիզանդիոն)

ՌՈՒՍ ՄԱՄՈՒԼԸ

Ա.

(Շար. նախ. քիռէն)

Սակայն վարչական տեսակէտէ
խնդիրը քննելու ըլլանք, խմբագ-
րապետներն հանգամանքը ճանչ-
նալու շահագրգռութիւնը բոլորու-
վին անպէտ պիտի չըլլայ: Արմա-
տականն մը կամ անխիշտականն
մը յօդուածը, եթէ չափաւոր մար-
դու մը պէս ալ գրուած ըլլայ,
միշտ այնպէս մը կը «կարգացուի»
որպէս թէ տողերը անխիշտական
կամ արմատական մէկը գրած ըլ-
լալ, վասն զի ուսու ընթերցողը
տողերու մէջէն կարգաւոր մասնաւոր
արուեստ մը ունի որ հիմնալի
կերպով մը զարգացած է ակնար-
կութիւններէ ու լուեկան հասկա-
ցողութիւններէ բաղկացած բողոք-
կուած լեզուի մը երկար վարժու-
թեամբ: Գրաբնութիւնը յօդուա-
ծագրին պարբերութիւնը ներացու-
ցած է, որը օձի պէս զգուշաւոր
մատնելուն մէջ կը սահի. նոյնպէս
ընթերցողին ալ հասկացողութիւնը

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

(3)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՐՎԻՇ...

Այս վերջին պարբերութիւնն արտասանելէ ետ-
քը, տէրվիլը լռեց:

Լուծիքի աղա չափազանց յուզուած էր:

Որչափ որ տէրվիլին ըսածները կիցկոտուր, ա-
նորոշ ու տարօրինակ էին, սակայն իմաստալից
նշանակութիւններ ունէին:

Քիչ յետոյ տէրվիլը շարժում մը ըրաւ, աչքերը
բացաւ ու ոտքի ելաւ այնպիսի՝ զիրքով մը որ
կարծես գերեզմանէ մը կուգար...:

— Սրախտապա՛րտ եմ, բարի տէրվիլի՛ս, մրմնջեց
Լուծիքի աղա: Ողորդեմք չպիտի մոռնամ: Հիմակ
ընդունէ՛ նուէրս, որ վարձատրութիւն մը չէ...:

Տէրվիլը ժպտելով քայլ մը ետ քաշուեցաւ...
Լուծիքի աղայի տուած նուէրին վրայ նայեցաւ ու
այնպիսի՝ սարսուռ մը զգաց, զոր՝ մարդու նկա-
րագրին մէջ հոգին շատ քիչ անգամ կրնայ արտա-
յայտել:

— Ո՛հ... Աստուած չընէ՛, մրմնջեց տէրվիլը:
Ե՛ս... ես դրամ առնեմ՝ ձեռքս, ես ասոր վրայ
նայեմ՝ այս ալեւոր հասակին մէջ... սոսկալի բան
է այդ՝ Պանէ՛, ցոյց մի՛ տար ինծի: Չե՛ս տեսներ
միթէ՛ հարկաւոր է այդ մետաղը... միթէ՛ բանի
մը կրնայ ծառայել մարդերու աչքը չլացնող այդ ա-
նարգ նիւթը...:

— Ինչպէ՛ս չկրնար բանի մը ծառայել, բարի՛
տէրվիլի՛ս, չէ՛ որ ապրելու համար միջոց մը պէտք
է... չէ՛ որ առանց այդ մետաղին բան մը չես
կարող ընել:

— Հա՛... իբա՛ւ է, իբա՛ւ է... կը հասկնամ՝
ինչ ըսել կուզես, պէ՛յս... գիտեմ թէ մարդիկ
այս անցաւոր աշխարհքին մէջ «ապրուստի միջոց»
անուն տուած են այդ անարգ նիւթին... այդ փայ-
լուն մետաղին... ես մտաբայ այդ կէտը... սակայն
իմանալու ես որ ինծի համար չէ: Օ՛հ, սիրելի բա-
րեկա՛մ, նայէ՛ անգամ մը... մտածէ՛ որ աշխարհ-
քը՝ լայն ու կեանքա՛ շատ կարճ է: Երբէ՛ք չեմ հո-
գար ապրիլ... Անթիքի չեմ միտնիր... Պատառ
մը հաց կը մօրամ գուռնէ մը եւ այդ օրը կանցնի
ինծի համար:

— Շատ աղէ՛կ, տէրվիլի՛ս, ի՞նչ կուզես որ տամ
քեզի... ինչով կուզես որ վարձատրուիս:

— Վարձատրեմ՝...:

— Այո՛:

— Ի՞նչ ըրի որ կուզես վարձատրել զիս:

— Ա՛խ, կուզեմ որ մտերիմս ըլլաս... անա՛

նպատակս:

— Ես ամենուն մտերիմն եմ: Ո՛վ որ անուշ լեզու
մը կուտայ ինծի, ես իմ սիրտս չեմ խնայէր անոր:

Ո՛վ որ աշխարհքին մէջ իմ դէմս կենէ բարութեան
մայր մը փոխարինելով, ես պարտաւոր եմ կեանքս
անոր նուիրելու: Ահա՛ այս է իմ նշանաբանս...
այս է այն ճշմարտութեան ուղին, որուն մէջ մտած
եմ մանկութենէս ի վեր... Գուցէ՛ զարմանալի կե-
րեւայ քեզի տէրվիլինքու կեանքը... Գուցէ՛ երկ-
րի վրայ եղած թշուառներու ամենէն թշուառը
նկատես զանոնք: Բայց սխալ է այդ կարծիքը:
Թշուառն ա՛յն է որ ինքնիրեն համար կապրի,
ինքնիրեն համար կը մտածէ ու ինքնիրեն համար
կը վայելէ... որովհետեւ չպիտի թէ մարդու եր-
ջանկութիւնն ո՛ւր է...:

Լուծիքի աղա ակամայ սարսուռ մը զգաց: Իրեն
այնպէ՛ս եկաւ որ այդ անձնուրաց մարդը հրեշտակ
մըն էր...:

— Ուրիմն ըսէ՛ ինծի, բարի տէրվիլի՛ս, ընդհա-
տեց Լուծիքի աղա՝ հոգեկան անուշ գառնութեամբ
մը՝ ո՛ւր է մարդու երջանկութիւնը:

— «Մարդու գերագոյն երջանկութիւնը թշուառ
մը երջանկացնելու մէջ է»... Եկատել տուաւ տէրվի-
լը:

Այդ պահուն ներս մտաւ թիարանի վերակացուն,
որ մեր ծանօթ Չէքին էր:

— Ի՞նչ կայ, Չէքի՛, հարցուց Լուծիքի աղա:

— Կալանաւորները կը սպասեն ձեր մեծութեան...
պատասխանեց Չէքի կակաղելով, ժամանակը կանց-
նի:

(Շարունակելի)

նրա ցուցած է. կառավարութիւնը այս բանը չառնելու գիտէ ու այս պէտքով բնական է թէ ջանալ լրացրու թիւնէ հեռացնելու այն մարդերը որոնց կարծիքները իրեն «մեղաւոր» թուին ինչպէս Ռուսիոյ մէջ պաշտօնական լեզուով կրօնը:

Յետոյ, ուրիշ պատճառ մըն ալ կայ, ալ տալի ընդհանուր, կառավարութեան խմբագրապետի անձին հետ շահագրգռուելուն ու նոր պարբերականներու հիմնարկութիւնը արգելելու ջանալուն մէջ: Այդ պատճառը, կամ աւելի ճիշդը այդ սկզբունքը մասնաւոր գէտատեւութիւնը ու անկէ վախէ. կառավարութեան կողմէ մամուլը նկատուած է չորս քիչ մը զոր արմատախիւ ընել կարելի չէ. հետեւապէս կը ջանայ գոնէ անոր ընդհանրանալը արգելիլ: Ու այնքան լաւ կը յաջողի որ 148 միլիոն հոգիի ժողովուրդի մը համար Ռուսիոյ մէջ 90 թերթ կ'աւելնէ, որոնց ամէնքը օրաթերթ ալ չեն: (*)

Նահանգներու մէջ, տեղային իշխանութիւնները, իրենց կարգին թերթը իրենց ուխտաւոր թշնամի կը համարեն: Ասոր պատճառը սոսկ թէ, հազուադէպ բացառութեամբ, ռուս մամուլը կը ջանայ կարելի եղած չափով բանոր դասակարգը հարուստներու շահագործումին, կառավարական պաշտօնեաներու զեղծումներուն ու կամայականութեան դէմ պաշտպանել: Ինչպէս որ ընդհանուր շահեկանութիւն ունեցող խնդիրներու մէջ գրեթէ միշտ կառավարութեան դէմ երկրին կողմը կը բռնէ: Ընդհանրապէս, այս վարմունքը ունենալու համար, սա հնարքը կը գործածէ. եթէ գրաքննութիւնը զոր օրինակ քաղքին կ'ամ երկրին մէկ պաշտօնատարին չարագործութեանց վերաբերող յօդուածներու հրատարակութիւնը չի թոյլագրէ, այդ յօդուածը, թղթակցութեան ձեւով, մօտակայ նահանգի թիւթիւն կուղարկուի, ուր կը հրատարակուի, վասն զի այդ ուրիշ նահանգին կուսակալին ընդհանրապէս անհաճոյ չի գար որ իր պաշտօնակցին վարչութեան մէջ թերութիւններ ու շփոթութիւն գտնուի: Հարկ չկայ ըսելու թէ առաջին առթիւ այս պաշտօնակցը իր գրաքննիչ նոր ծառայութիւնը կընէ: Ու պաշտօնատարներու այս պղտիկ խաղերէն նահանգային մամուլը օգուտ կը քաղէ իր ծանր պարտականութիւնը լաւագոյն կերպով կատարելու համար:

Ուրիշ միջոց մըն ալ կայ: Բէգրապուրկի ուսանող ըլլալուն, լաւ ճանչցայ մեծ արժանիքի տէր հրատարակագիր մը Նիքոլա Եստրինցեվը որ Բէգրապուրկի մէջ կը հրատարակէր Սիպերիական դէպքերու յատկացուած փոքրիկ շաբաթաթերթը:

(*) Անշուշտ այս թիւին մէջ հաշուած չեն իւրաքանչիւր նահանգի մէջ հրատարակուող պաշտօնաթերթերը:

Թերթ մը, որ սիպերիական բոլոր իշխանութեանց օրհնում կ'ազդէր: Քանզա՞նք բայց վերջին ծայր թափանցիկ անուններու տակ, Եստրինցեվ հոգ կը նկատէր այնպիսի պաշտօնատարներ որոնք երկրին մէջ ամէն մարդու կողմէ կը ճանչցուէին կատարելապէս, ու զանոնք մեծաքթիչ կը ծիծաղեցնէին: Նոյն իսկ բնագիտութեան կառավարչները զերծ չէին մնար յօդուածագրին քուսակը տալէն:

Բէգրապուրկի գրաքննութիւնը ամէն բան կը թոյլագրէր, վասն զի կ'անգործէր թէ խնդիրը որոնց վրայ է: Ընդհանուր կառավարչները, կուսակալները բողոքելէ կը զգուշանային, անփոյթ ըլլալով Եստրինցեվի հեգնած ու ռամկացուցած կոշտ անձնաւորութեանց մէջ ինքզինքնին ճանչնալուն: Ու ահա այսպէս մեծ հրապարակագիրը ի գործ կը դնէր գերագոյն դատաւորի ու անխնայութեանց փոխարինողի իր աստիճանը:

Թարգմ. «Ռուսիա և Ռուսիայի» (Շարունակելի)

ՍԵՐԵՍԻԱԿԱՆ ՏՆՈՒՄԻ ՏՂԱՆ

Մանուկ Սէթեան տխուր տղան՝ որու մի սպասնական նամակն հրատարակուած էր Խրաւանի մէջ, ուղղուած Պրախլայի Տէր Ստեփան քահանային, առանց չիկնելու, առանց ամփնալու, փախուստի ճամբաներով, կցկտուր, անձա՞նք բան մը չիներ եւ իրեւ պատասխան չի տրուէ: Ընթերթի մը:

Պատասխանագիրը կրնայ նկատուիլ Սէթեանի բարոյական մահու գտնութեան: Արգահատանքի արժանի է այդ վատահամբաւ տղան երբ անամթաւ բար չուզեր հասկնալ թէ՛ միայն իրան աւագակապտաներու յատկանիշն է պայմաններով գրաւ, գործ եւ շնորհ պահանջել անձնական շահերու համար:

Նկարագրէ բոլորովին զուրկ, ապականեալ ոգի մը, նեխուած սիրտ մը երեւան կը բերէ այդ պատասխանագիրն որ մի երկրորդ սպասնական նամակ է: Հոն, այդ գրի մէջ, ճիշդութեամբ պարունակ խորամանկութեամբ, մէկ երկու սպասնական դարձուածքներ սպառնացողներ է վախ տալով Տէր Ստեփանի թէ՛ այս անգամ շատ բաներ պիտի գրէ:

Հիմա Ս. Գոռայրի դիմակը վար առնուած է, ամէն մարդ ալ համոզուած գոյացուցած է. Մանուկ Սէթեան բաղադրեցող մըն է որ տարիներէ ի վեր սպասնալիքներու միջոցաւ ապրելու եղանակն իրեւ արհեստ ուսումնասիրել սովորած է:

Սէթեան այն շահատակն է որ անցեալ տարիներն հրապարակաւ հիացում կը յայտնէր Ս. Եղիշէի ատած վասակ մատնիչին, եւ մեր վարժարանի աշակերտներու հայրենասիրական ոգին կապականէր:

Սէթեան այն անբարոյական տղան է որ մեր նախկին քահանային երիցունին խեղ, քահանան իր կողակցէն բաժնեց եւ այսպէս տուն մը քակեց:

Սէթեան տխուր շատ տխուր կեանք մը ունի: Ինչքան Սիւրբաբեցիք զինքը լաւ կը ճանչնանք եւ իր մասին Գոռայր:

քանզայէն մեզ հասած շատ մը նամակներէ հաւաքածոյ մը կը կազմենք արդէն, եւ երբ հարկը պահանջէ, պիտի հրատարակենք այդ ամէնը: Մանաւանդ՝ երբ պէտք լինի, հրատարակ պիտի նետենք իր մէկ քանի նամակներն, որոնք բացարձակապէս պիտի պարզեն բովանդակ Պուրկարահայուն եւ Ռուսահայուն թէ՛ ինչ գծով եւ ողորմելի արարած մըն է այդ Սէթեանը:

Սիւրբաբեցի
Մ. Ս. — Պրախլայի Տ. Ստեփան քահանային եւս նամակ մը գրելով մեզ Սէթեանի վերջին բարանջանքները բոլորովին զրպարտութիւն կանուանէ, եւ կը յայտարարէ թէ Սէթեան երբեք Պրախլայ կանչուած չէ:

ԹԵՂԱՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊՈՒՐԿԱՋ, 2 Օգոստոս

Պոռկապի աղքատներուն

Մօտաւորապէս ութն ամիսներէ ի վեր տեղս կազմակերպուած է «Աղքատախնամ» անուան ներքեւ մասնախումբ մը, որ կը բաղկանայ գործաւոր դասակարգի մարդոցմէ:

Յիշեալ մասնախումբը՝ որուն նպատակն էր տեղական անկեղծ գործաւորներուն ստատելի եւ նիւթական օգնութիւններ հայթայթել կարելի եղած միջոցներով, այսօր կը հարկադրուի հրապարակաւ յայտարարել թէ ինքը չկրնար ուրիշ քաղաքներէ տեղս դիմող անձներուն օգնել, թէեւ անոնք լսկապէս նիւթական կարօտութեան մէջ ըլլան, որովհետեւ գործերու անցուկ դրութեան պատճառով զաղքած են ամառըները զոր կը վճարէին բոլոր գործաւորները: Իսկ քանի մը խանութպաններու տուածն ալ անբաւական է այդ կարգի աշակերտներէն: Եւս յայտարարութիւնը կընէ մասնախումբը, նկատելով որ ազատած կը լինի խղճի պարտականութենէն:

Թղթակից

ԱՋԳԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Դավրէժէն Օգոստոս 7 թիւով հետեւեալ յուրիշ հեռագիրը տըրուած է Բաթումի Արմենիայի:

«Մուշի կառավարութիւնը հինգ չուկատ (թապուր) զինուոր զրկեց Սասուն: Հրահանգներ տուած է այն աշխրէթներուն՝ որ ամառը Սասունի մէջ պիտի անցնեն, առանց իրենց ընտանիքներուն հոն գալ: Հաղորդակցութիւնները դադարած են Սասունի եւ Մուշի միջեւ: Յուզումը մեծ է:»

— Սիսի Մայր վանքին պատկանած հողերը իւրացնելու համար ասկէ առաջ ալ եւ ալ իսլամ յա-

վաղակիչներու կողմէ եղած ոտընդգուլթեան դէմ բացուած դատավարութիւնը վերջացեր եւ ինչպստ վանքին վճիռ տրուեր է դատարանին կողմէ:

— Ս. Էլմիածնայ Գէորգեան Ճեմարանը այս տարի նոր գիշերօթիկ պիտի չընդունի, բաւականէն աւելի ունենալով:

— Ռուս կառավարութենէն զբաւուած կողմիսի հայ վարժապետներու ծախքին մեծագոյն մասը՝ որ հայ բարբարոսներու նուէրներով կը գոցուէր, այժմ բաց կը մնայ, որովհետեւ առջի անհատական նպատակները դադարած են, ու կառավարութիւնը կը հարկադրուի քաղաքապետական ստուղներէն հոգալ տալ հարկ եղած գումարները: Բայց ասոնք ալ կը դժկամակին վճարել:

— Ս. Երուսաղէմի Տ. Յարութիւն պատրիարքը վարդապետի տօնին օրը ութ ընծայացուներ վարդապետ ձեռնադրած է:

— Բէնկեանցի Տ. Վարդան քահանայ Ասլանեան՝ որ ծանօթ է իր գրական կարողութեամբ եւ լաւ ֆորմանագէտ է, այժմ գլխաւոր ընտրելին է Մանչեսթրի Հայոց քահանայութեան պաշտօնին: Իսկ նախքին Ջուղայեցի քահանան իր բացած դատը գոցել տալէ զատ որոշեր է իր հայրենիքը քաշուիլ:

— Յրանսացի ազնուական Գոռնա կոմսուհին որոշեր է Բարիզի չրջակաները հաստատութիւն մը հիմնել, ուր պիտի դաստիարակուին առաջին վեց Հայ անոջ աղջիկներ:

— Բիթլիյէն (Ռուսմանիա) մեզ կը գրեն թէ Յուլիս 22 ին գիշերը Ադամ Աստուրեան անուն 67 ամեայ սրճագործին խանութը երկու սրիկաներ մտած են ծեծելու ու կողոպտելու նպատակաւ: Բայց կատրուած ապակիներուն ձայնէն զրացիները արթննալով, օգնութեան հասած եւ ոստիկան գօմիսէրը կանչելով բռնել տուած են չարագործները: Այժմ ուրիշ կասկածելի մըն ալ այդ ծերուկ պանդուխտին շուրջը կը դառնայ եղեր: Խեղճը շուրաւ վիճակի մէջ, մեզ կը գրէ. «Հիմակ ինչ ընեմ, չեմ գիտեր. ծերութեան սա 67 տարիքիս մէջ ո՛ւր երթամ, քանի որ անցագիր չտրուիր հայրենիք գնալու»:

— Բարիզի մէջ կառուցուելիք եկեղեցւոյն պիղման տրարողութիւնը քանի մը շաբաթ առաջ կատարուած էր, իսկ հիմնարկէքիաւ բարողութիւնը պիտի կատարուի հանդիսաւոր կերպով յառաջիկայ Ս. Աստուածածնայ տօնին օրը:

— Պարսից Շահը խանութեան տիրոջ եւ Առիւծ-Արեգական պատուանշան շնորհած է Բարիզի մատրան Հոգաբարձութեան ատենապետ Տ. Տօքթ. Յովհաննէս Սըգրեանի:

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԵԳԻՅԷ

Թ Ի Ի Ք Ի Ա

Պուլկար հիւքիւմէթի Մաքէ-
թոնիա գոմիթէսին Սօփիատա
Գօնկրէ թէճէմիւ իթմէսինէ միւ-
սաատէ իթմիւ զօրդընտան, թիւրք
տէվլէթի հիտտէթլէնմիւ. վէ պու
սէպէպլէ՝ Սէրէզտէ թէսիս օլընա-
ճագ պուլկար գօնսօլըղը Պապը
Ալի՝ վատը խիւթընա օլտարագ՝
գապուլ իթմէյէճէք իմիւ. Մա-
լիւ օլտարը իւզրէ պիր գաչ հաֆ-
թա մուգատտէմ Սէրէզտէ թիւրք-
լէր պուլկար պանտէրասընը վէ
արմասընը ճէպրէն էնտիրմիւլէր
իտի, պու սէպէպլէն իքի հիւ-
քիւմէթ պէյնիւտէ միւնազ սա զու-
հուր իտուպ, նիհայէթ Պապը
Ալի Պուլկարիւնըն թալէպիւնի
գապուլ իթմիւ վէ շէհրէ մէզքիւր-
տէ գօնսօլընաէնիւն թէճէսիսինէ
հիւսնի ըրգա կէօսթէրմիւ իտի,
Շիմտի Պապը Ալի պու վատընը
այագ ալթընա ալմագ իսթէր ի-
միւ.

— Թէպրիզտէն Օգոստոս 7 թա-
րիսլէ շու թէլէկրաֆ ալընմըշ-
տըր.

«Մուշ հիւքիւմէթի Սասունա
պէշ թապուր ասքէր Եօլլատը,
Եագ մէվսիմիւնի Սասունտա կէշի-
րէճէք օլան աշիրէթլէրէ թալի-
մաթ վէրիւտի քի ֆաթիւլալարընը
պէրապէր կէօթիւրմէսինէր. Սա-
սուն վէ Մուշ արասընտա մուխա-
պէրաթ քէսիւմիւ տիր, Հէյէճան
պէօյիւք».

— Սէլանիքտէն պիւտիրիմիւ
տիր. — «Մահպուտէնէր բօլի-
թիգա միւթթէհիմլէրի իլէ տօլ-
մուշ տըր. 300 քիշիտէն զիյատէ
մահպուտար մահքիւմիլէթլէրինի
պէքլէյօրլար. Հալլէրի տայանը-
մաղ տէրէճէտէ տիր. հէր կիւն
իսքէնճէյէ ալընթօրլար, Եէմէք
վէրիւմէյօր. Պիր գաչ կիւն էվվէ
Ալմանիա գօնսօլըն Մ. Բատէլ,
մէզունիլէթ ալտը պիր րահիպլէ
մահպուտէնէրի կէպմէք իշիւն.
Օրատա կէօրաթլէրինի ըվա-
յէթի զայէթ տէհէթմաթիւ տիր.
Րօսօլօտա, Թիկնիցատա վէ թիւք-
վէզտէ մահպուտա պուլընանլարըն
իսքէնճէսի էն զիյատէ տիր. պուն.
լարտան էքսէրիսինի ալազլարը
Եանմըշ տըր. Գօլէ Տիրփարօվըն
զէվճէսի հումիլէ օլտըղը հալտէ,
տայագտան գանլարա միւլէմա
օլմուշ վէ Եէտի Բուլէ մահպու-
տէնա աթըրմասընտան պիր գաչ
կիւն սօնրա տօլուրմուշ վէ իսքէն.
ճէլէրին թէճէսիլի իլէ էօլմուշ
տիր».

— Լիւրանա պէյիկի իշիւն Պապը
Ալիին կէօսթէրմիւ օլտըղը վէ-
քիւ Էֆէնտի նամ զաթ էլիլէրտէն
գապուլ օլընմատը.

— Թիւպիլինի մաթուպաթը
իշիւն Եօտէնիլէճէք պէշիւնի թագ-
սիթ՝ խազիւնտէ բարա պուլըն-
մատըղը սէպէպլէն Եէվմի մուսայէն.

տէ (Օգոստոս 14) էօտէնմէմիւ տիր.
— Րուս Գարատէնիլ տօնանմա-
սընըն գօմանտանր Եագընէն Սթան.
պօլա կիտուպ, Սուլթան իլէ կէօ-
րիւշէկի միւրէվմի տիր.

ՏԱԽԻԼԻՑԷ

Կէշէն բազար կիւնիւ շէհրիմիւ
Գաղա Եալսօտ իտարէ մէճիւսինի
ինթիսապը իճօա օլընտը. հիւ-
քիւմէթին գանտիտալարը Էքսէ-
րիլէթ գազանտը. իլք տէֆս օ-
լարագ, Մ. Բրէֆէնի վէ տօս.
թիւրմը մէպուսանտան Մ. Բէթր
Տրակուլէֆին արգուլարը մուճիպ՝
պիր էրմէնի ազա տարի ինթի-
սապ օլընտը.

Պէլէտիլէ ինթիսապաթը տէ
պու բազար կիւնիւ իճօա օլընաճագ
տըր. Պալէտտէ մէզքիւր զէվաթ
պու սէնէ Պէլէտիլէ մէճիւսի իշիւն
իքի Էրմէնի ազա ինթիսապ իթ-
տիրմէք արգուլարտա տըրլար. Շու-
արգու հէր հալտէ Պուլկարլարըն
միլլէմիւզէ օլան հիւսնի թէվէճիւ-
հիւստէն իլէրի կէլիւ, պիւ տալի
քէնտիմիլի անա լալըգ կէօսթէր-
մէյէ չալըշմալըլը.

Տիւն պուլկար տօսթլարըմըզ-
տան պազըլմաթ թէճէսիլէն պէ-
յան իթտիլէր քի՝ Էրմէնիլէր ին-
թիսապաթտա ըյ (քուէ) վէրմէք
խուսուսընտա վազիֆէսիլ տալիւ-
նըյօրլար, չօզլարը շու պիր թա-
նէճիք հազլարընը իսթիմալ իթ-
մէքտէն սարֆը նազար իտէյօր-
լար.

Տօլրուսը շու գուսուրըմըզ պիւ
տալի իթիւրաֆ իթմէյէ մէզպուր
օլըյօրլար. Պու վազիֆէսիլ իկիմիւ
տուկուսըղըգտան իլէրի կէլիւ.

Պուլկարիւնըն տալիլ թարաֆ-
կիւրիլէրինէ իշթիւրաթ իթմէք
կազէթմաթըն մէպէք խարիճին.
տէ պուլընտըղ ճիհէթլէ, տիլէ
մէյիլ քի՝ միլլէթտալարըմըզ ֆի-
լան բարթիլէ թարաֆ թուլթսըն-
լար. Եալընը շուսու թալիլիլ
իտէրիլ քի Պուլկարիւնըն վէ միլ-
լէթիմիլին մէնֆաթընը թէտ-
գիգի նազարա ալուպ տէ, օնա
կէօրէ ըյ վէրմէք հագըրմըզ իս-
թիմալ իթմէլիլիլ, վէ հէր հալտէ
ըյ քեաղըտըմըզ կէօթիւրիպ
գուլթույա աթմալըլը. զիրա վէ-
րէճէկիմիլ ըյլէրին մըգտարընա
կէօրէ հիւքիւմէթ վէ պուլկար
միլլէթի էնտիւտէ էհէմիլիլ քէսպ
իտէպիլիլիլ.

— Վիւքէլա ըյիսի Մ. Տանէ.
վին Պէլկարտա կիտէճէկի գարաթ-
կիր իքէն, նէ սէպէպլէ իսէ, պու
Եօլըղըն թէլէթիւր օլմուշ օլտը-
ղը Սօփիատան պիւտիրիմիւ
տիր.

ՄԱԲԷԹՈՆԻԱ ԳՕՄԻԹԷՍԻ

Պիր գաչ կիւն էվվէ Սօփիատա
Մաքէթոնիա գօմիթէլէրինի մէճ.
լիսի ումուսի թէճէմիւ իթմիւ
օլտըղըն պիւտիրիմիւ.

Պու տէֆա հէր թարաֆտան
թօլլանմըշ օլան մուրախալար

պաշըճա իքի ֆերգալա թագսիմ
օլընթօրլար. Մէճիւսին քիւշաթըն.
տա՝ հէսապ վէրմէյէն շիրքէթլէրին
մուրախալարը ըյտտ օլընտըլար.
պու սէպէպլէ Եալընը 61 քիշի
գապուլ օլընտը, պուլկարտէ Էքսէ-
րիսի ժէնէրալ Չօնլէֆի ըյիս ին-
թիսապ իթտիլէր.

Մ. Պօրիս Սարաֆու վէ քէնտի
թարաֆտարլար շու մուսթիլաթ-
տան տօլարը շէտիտէն բրթթէթ-
իտուպ, մէճիւս սալօնընը թէյք
իթմիւլէր, վէ քէնտիլէրի իքիւնի
պիր գօնկրէ թէշքիլի իլէ ալը
գօմիթէ ինթիսապ իթմէք վէ
Մաքէթոնիա տալիլինտէ թէշքի-
լաթա ուղրաշմագ թէտպիրինտէ
պուլընթօրլար.

ԻՆԿԻԼԹԷՐԱ

Պօէր ժէնէրալարը Տըլարիէ,
Պօթա, Տէվլէթ Լօնտարալ Եէթիւ-
տիլէր, Էհալի պու գահրաման վէ
վաթանբէրվէր գապիթլէրի ալըր-
լարլէ գարշլատը. Գրալ Լու-
ուարտ վէ Գրալիցա անլէրի հու-
զուրա գապուլ իթտիլէր. իգրամ
վէ թագիմ շիմտիլիք բէք պէօ.
իւք.

ՖՐԱՆՍԱ

Ֆրանսատա էլան գահանմալը օ.
լան րահիպէ մէքթէպլէրինի ճէպրի
սուրէթտէ գարանըմաթ տէվաթ
իթմէքտէ տիր. Չօք մահէլլէրտէ
քէօլլիլէր հիւքիւմէթ մէմուրլա-
ընա գարշը տուրմագտա օլուպ,
գարըշքըլըլար վուգու պուլմուշ
տըր.

Հիւքիւմէթ պու գարըշքըլըլըն
իշիւնտէ գրալիլէթ թարաֆտարա-
ընըն բարմաղըն կէօրմէքտէ
տիր. Պու սէպէպլէն շէտիտ
թէտպիրլէր իսթիմալ իտէյօր.

— Բարիստէն ալընան սօն պիր
թէլէկրաֆանազարէն, Օրլէանիսթ-
լէր տիւք տ՝ Օրլէանա պիր թէլէ-
կրաֆ քէշիտէ իտուպ, անըն կիւն
էվվէլ Ֆրանսալա կիրմէսինէ ար-
զու պէյան իթմիւլէր.

ՉԻՆ

Թիւնցիւնտէն Էվրոգա ասքէրլէ-
րի ալըն 15 ինտէ չէքիւլուպ, շէհրի
Չին հիւքիւմէթինէ թէսլիմ իթ-
միւլէր տիր.

— Բէթրապուրկտան ալընան
պիր թէլէկրաֆա նազարէն, Րու-
սիստան Չինէ թէմտիտ օլընան
չըմէնտիլէրին չին ստաթիօնլարըն-
տա գօրէլա տէվաթ իթմէքտէ ի-
միւ.

ԻՐԱՆԻԱՆ ՔԱՏԱՍԵԱՆԵՐԸ

Տ. Միհրան Խալաուդընա Սի-
լէն — Բանի թիւ որ պակաս ու-
նիք հատը 10 սանթիմի հաշուով
Երբ գրամը զրկէք, անմիջապէս
կը ստանաք.

Տ. Պ. Սոքրիա, Անտոն. —
վճարած էք մինչեւ Յուլիս.

Տ. Ա. Շ. Պոշրիպ. — Չարժեք
այդ աղտոտով ալ զբաղիլ.

ՏՕԲԹԷՐ ԹՈՐՈՍԵԱՆ

Մանուգէտ Տննարկան գործարա.

Ասց եւ զաղտնի հիւսնդորքաւն
Երեսուն եւ հինգ տարիներէ ի վեր
արհեստին մէջ ստացած գործնական
փորձառութիւնէն զատ վերջերս շուրջ
երկու տարի ալ Բարիք միալով իր
մասնագիտութիւնը կատարելագործած
է. վաշեւած ճարտար բժշկի համալը
զինք վառնայի հասարակութեան յանձ-
նարարելու պէտք չը ձգեր.

Կը բնակի Տիմիթր Նիքօլայէֆի տու-
նը, Լազարաքա փողոց թիւ 553,
Բ. Թաղ.

Հիւանդ կրնդունի առաւօտները
միայն ժամը 10էն մինչեւ 12.

ԾԱՆՈԹՈՒՄ

Գիրքեր, Թերթեր եւ Մանուգրուներ

Կը ծանուցանենք արգոյ հայ հասա-
րակութեան որ երկար առնէն ի վեր
մեր յարաբերութիւններ շտկած ենք
թէ՛ հայ եւ թէ՛ օտար նշանաւոր գրա-
վաճառողներու հետ, աշխարհի ա-
մէն կողմերը. կը հայթայթենք ունէ
գիրք կամ թերթ՝ ունէ լեզուով, ո
ւնէ հեղինակութեամբ ունէ նիւթի
վրայ, եւ ունէ գնով, ծանուցում-
ներ կընդունենք բոլոր լեզուներով.

Մեր Հասցէն
M. M. Karagavoorian & Co.
Inpeters and Manufactures, Books Pe-
riodicals and Novelties, P.O Box 330
Chicago, U. S. A.

ԹԱՏՐՈՆ ՊՕՐԻՍ

Վաղը, հինգշաբթի գիշեր պիտի
ներկայացուի, «Վէսէլօ» Հայ դերա-
սանական խմբին կողմէ ի նպատակ Տ.
Պալէմանի եւ երկու դերասաններու,
ԱՅՏԱ հոշակաւոր ողբերգութիւնը 5
արար.

Խիստ ծիծաղալար զաւեշտ մը Պ. Ա.
Պէնլեանի կողմէ.

ԵՐԳ ԵՒ ՊԱՐ.
Տոմարկները այսօրունէ կը ծախուին
Տ. Չարպանէլեանի գրատունը.

ՆՈՐ ԹԱՏՐՈՆ

ՀԱՅԻ ԲԱՆԱԲՈՒ

«Վառիթէ» դերասանական խումբը
վաղը գիշեր առաջին անգամ ըլլալով
պիտի ներկայացնէ մասնակցութեամբ
Պ. Ստալօրի, ի նպատակ Պ. Սթէյլօր
եւ Պ. Չօյի «Պուլկար Սերպ Պատե-
րաղը» բանաստեղծ 6 արար 12 պատկեր
եւ զարդարուն տեսարան.

«Ոճրագործ Ամուսինը» տրամ-գօմէտի
3 արար.

Երգեր եւ պարեր.
Վառիթէ խումբ

Ա. Չ. Գ

Չայնադարագէտ երաժշտապետ մը՝ որ
թէ Պոլիս եւ թէ արտասահմանի մէջ
երկար տարիներ պաշտօնավարած է եւ
յանձնարարելի վկայականներ ունի ի
ձեռին, պաշտօն կը փնտէս.

Նոյնպէս Հայկերէնի, Ֆրանսերէնի
եւ չափազանցութեան հմուտ ուսուցիչ
մը կուզէ պաշտօն ստանձնել Պուլկա-
րիոյ վարժարաններէ միոյն մէջ. Եթէ
պահանջուի Գերմաներէն ալ կարող է
գասախօսիլ.

Ա. Չ. Գ

Գործան երկրագործական հանգէսի
տեղւոյս նոր գործակալն է Տ. Համ-
բարձու Բիրիլեան ի Մուսալլա Բա-
ժանորդը թող գիմին յիշեալի ու ստա-
նան իրենց թերթերը.

Նոր բաժանորդագրուիլ եւ կամ հա-
տով գնել փափագողները նաեւ պէտք
է նոյնին գիմին.

Մէկ թիւի գինն է 1 լէվ.

Одговорникъ Н. Драгулевъ
Печ. на Хр. Н. Войниковъ—Варна